*Հավելված 3*
*Արդարադատության ակադեմիայի*
*կառավարման խորհրդի 2020 թվականի*
*դեկտեմբերի 29-ի թիվ ԿԽ–010/20/1 որոշման*

**ՈՒՍՈՒՑՄԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**
**ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատական կարգադրիչների 2021 թ. վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա: Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նաև Բարձրագույն դատական խորհրդի 06.08.2020թ. ԲԴԽ-52-Ո-113 որոշումը:
3. Ծրագիրը նպատակաուղղված է վարքաբանության, առաջին բուժական և հոգեբանական օգնության, ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտությունների վերաբերյալ դատական կարգադրիչների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը:
4. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ու հատուկ ուսուցումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը:
5. Վերապատրաստման և հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2021 թվականի մայիս-օգոստոս ամիսները:

## II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

| № | Դասիչը | Անվանումը | Ժ/ք |
|---|---|---|---|
| 1. | B-G-015-21 | Դատական կարգադրիչների վարքաբանություն | 12 |
| 2. | B-G-016-21 | Առաջին բուժական և հոգեբանական օգնություն | 12 |
| 3. | B-S-001-21 | Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտություններ | 6 |

## III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 1. B-G-015-21. Դատական կարգադրիչների վարքաբանություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայողական վարքագծի կանոնները, էթիկայի ծագման և սահմանման հիմնահարցերը, բարեվարքությունը, էթիկետը, հիգիենան, կառավարման հնտությունների վերաբերող հիմնահարցերը, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-016-21 դասընթացի հետ միասնական քննությամբ:

### 1. B-G-016-21. Առաջին բուժական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները: Դասընթացը պայմանավորված է նաև դատական կարգադրիչների՝ դատարաններում արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակ առաջանալու դեպքում ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, էքստրեմալ իրավիճակների հոգեբանությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Դասընթացը ներառում է նաև միջանձնային հարաբերությունների հոգեբանական ասպեկտները, ինքնակառավարման վերահսկողության առանձնահատկությունները և ներազդման հոգեբանությունը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-015-21 դասընթացի հետ միասնական քննությամբ:

### 2. B-S-001-21. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտությունների, ֆիզիկական ուժի և հրազենի կիրառման անհրաժեշտության, կիրառման պայմանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման համար:

Դասընթացը ներառում է շարային պատրաստվածությունը, ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառումը, գազային ատրճանակի և կարճափող հրազենի կիրառման հմտությունները:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով: